WIEN 6 BESTELLT 30.10. 8-9

Դ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901 — Թիւ 59

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ղուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Տպագրության տողը առաջին երեսին համար 40 սանթիմ. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ. երեքեն աւելի անգամներու համար 20 Սկզ. գնդ կը լայ։
Վաճառայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse W. 4 (Autriche) Vienne

[illegible] դրկել
[illegible] հասցեին
—
Редакция на вѣстникъ «Шаржумъ»
Варна
Redaction du journal «Charjoum»
Varna (Bulgarie)
Փոխիներ եւ չեն տրուիր
Արտասահմանի ձեռքի
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Ղուլկարիոյ համար ձեռքի
✕ 15 ՍԱՆԹԻՄ ✕

☛ ՇԱՐԺՈՒՄԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ ☛

«ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ»

Մեծ ժողովածու Ֆրանսերէն լեզուով 1000 էջերէ, պատկերազարդ. մասնակցութեամբ նշանաւոր Եւրոպացիներուն հրատարակութիւն «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան»
(Նախ որոշած է 15–20 հազար ֆր.)

ԾՐԱԳԻՐ

1. Ծանուցում Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան։
2. Ընդհանուր առաջաբան
3. Կոչեր նշանաւոր Եւրոպացիներուն, յօգուտ հայերի և հայոց հարցի լուծման։
4. Ակնարկ հայոց պատմութեան. Ա. Հայերի դերը նախաքրիստոնէական և քրիստոնէական շրջանում. Բ.) Հայերի կռիւը քաղաքական հարեւանների հետ. Գ.) Կրօն. եկեղեցի. Դ) Հայկական իրաւունքը։
5. Հայաստանի աշխարհագրութիւնը, Ա.) Քաղաքական (հին և այժմեան). Բ.) Նկարագրական։ Գ.) Հայերի թիւը (ուսումնասիրութիւն). Դ.) Դրացի ազգեր։
6. Ազգագրութիւն։ — Հնախօսութիւն (հայկական բեւեռագրեր։ Հայկական դեղարուեստ ճարտարապետութիւն։
7. Հայոց գրականութիւնը. լեզու. Ա.) Հին մատենագրութիւն. Բ.) Նոր գրականութիւն. Գ.) Կոստանդնուպոլսոյ և Թիւրքահայերի մամուլի պատմութիւն։
8. Արեւելեան հարցը և նրա պատմական տեսութիւնը։
9. «Հայոց հարցը». Ա.) Հայերի քաղաքական շարժումը Թիւրքիայում. Բ.) Թիւրքահայերի տնտեսական կեանքը. Գ.) 1850-1900 (պատմական քննադատութիւն)։ Դ) Ապստամբութեան շրջանը. յեղափոխութեան դլխաւոր մոմենտներ (պատմական ակնարկ)։ Ե.) Կոտորածներ. Զ.) Հայոց հարցը եւրոպական դիպլոմատիայի առաջ. Ա. Պարիզի կոնգրէս. Բ. Սան-Ստէֆանո, Գ.) Բէրլինի կոնգրէս։ Դ) 1895ի ծրագիր. Ե.) Պաշտօնական ակտեր։ Է.) Թիւրք կառավարութեան վերաբերմունքը դէպի հայկական դատը (թանզիմաթ—Խաթթ ը Հէրիֆ, Խաթար Հիւմայուն և այլ կարգադրութիւններ)։
10 Եւրոպացիների Կարծիքները։ Ա.) Գրողներ. Բ. Պետական գործողներ. Գ.) Միսիոնարներ. Դ.) Ճանապարհորդներ. Ե. Նորագոյն հայասէրներ (քաղուածքներ)։
11. Հայերը Ռուսաստանում. Նրանց կատարած դերը 19րդ դարու սկզբում։ Զինուորականներ։
12. Կովկասեան հայերը։
13. Ակնարկ Պարսկաստանի հայերի մասին։
14. Հայ գաղութներ. (Բալկան, Եգիպտոս, Ամերիկա. Հնդկաստան, Լեհաստան)։
15. Կենսագրական (նշանաւոր հայերի եւ հայասէր եւրոպացիների)։
16. Թիւրքաց լծից ազատագրուած երկիրներ (Պղտութեան պատմութիւն—Յունաստան, Բուլգարիա, Ռումանիա, Սերբիա, Կրետէ)։
17. Տեսարաններ. Նկարներ։ Լուսանկարներ։ Հայաստանի քարտէզ։
18. Հայերի ապագայ դերը Փոքր Ասիայում։

ԼԻԱԶՈՐ ԿՕՄԻՏԷ

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾ

Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը որոշել է Ֆրանսերէն լեզուով, հռչակաւոր եւրոպացիների աջակցութեամբ «Հայաստան եւ Հայոց հարցը» անունով հազար երեսից կազմված մի պատկերազարդ գիրք հրատարակել։

Այդ հրատարակութեան նպատակն է ծանօթացնել եւրոպացիներին հին ու նոր Հայաստանի և հին ու նոր հայ կեանքի հետ մանրամասնօրէն։

Դժուարին, բայց գեղեցիկ ու կարեւոր գործ։ այդ գրքի հրատարակութեամբ միայն Եւրոպայի Հայ Ուսանողական Միութիւնը մեծ ծառայութիւն պէտք է մատուցանի իր ժողովրդին և հայրենիքին։ Դա մի տեսակ հայարձան պէտք է լինի եւրոպացիների համար։

Բայց գիտէք ի՞նչ կայ, ընթերցողներ. այդ գիրքը 15—20 հազար ֆրանք ծախսով պէտք է լոյս տեսնի։

Ուսանողներին ո՞րտեղից այդքան դրամ. չէ՞ որ նրանք ծնողների կամ բարեբարների հաշուով ապրող մարդիկ են։

Զեղ համար պարզ չէ՞ որ հայ հասարակութիւնը, առանց սպասելու Ուսանողական միութեան դիմումին, պարտաւոր է օգնութեան հասնել այդ հոյակապ գործը գլուխ բերելու համար։

Մենք հրաւէր ենք կարդում «Շարժումի» համակիրներին առանց վարանելու դրամական նուէրներ ուղարկեն Ուսանողական Միութեան, այդ գրքի հրատարակութեան համար։

Այս դէպքում ամէն մարդ կարող է նէր տալ, իր ուժի չափով։

Ուսանողութիւնը երբ իր պարտականութիւնը կատարում է և իր մոքի առաջին արդիւնքը նուիրում է հայրենիքի օգտին, հայ հասարակութիւնն էլ չը պէտք է թերանայ իր պարտաճանաչ մատաղ սերնդին զօրավիգ հանդիսանալու նիւթական օժանդակութեամբ։

ՎԱՐԴՈ

ՍԱՄՈՒԼԸ ԵՒ ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Սա վերջին վեց տարի աշխարհում վազքին մէջ, գրեթէ չը մնացած մի քաղաքակիրթ կարծուած երկիր մը, որուն մամուլը չատ կամ քիչ չափով չը խօսէր, չ'գրաղէր Սրեւելեան խնդիրներով էն՝ կենտրոնին, էն՝ դժբաղդաւորին՝ հայկական մեծ հանելուկին հետ։

Ամենէն առաջ անգլիական մամուլը, հրապարակագրութեան այդ փառաւոր ու հիանալի հսկան, Թայմզի եզերքէն մինչեւ Ամուր գետի ափունքը, Բրիտանիոյ խորերէն մինչեւ նոր աշխարհի ներսերը հասցուց, հազորդեց ժամանակին՝ սովի եւ սրածութեան սարսափը, անիրաւութեան արհաւիրքը եւ հոգեվարքի զանդումը, որ հիդրայի մը նման Հայաստանի—աւելի հիշդը Թուրքիոյ մէջքին փաթթուած՝ կը գալարէր, կը պրկէր եւ կ'սպառնար զայն կլանել, ինչպէս պօան իր ձեռքն ինկած այծեամը։

Հետզհետէ գրեցին ու գոռացին նաեւ ֆրանսական, Հոլանտական եւ քիչ մ'ալ ամերիկեան լրագիրները, բողոքելով համբաւաւոր Եւրոպայի կենդանական անտարբերութեան դէմ։ Սակայն ափսո՛ս, որ Պիզմարքին, այդ քաղաքագէտ մեծ ոճրագործին գծած դիւանագիտութիւնը—արժանի դիւանագիտութիւն կոչելու—բիրտօրէն խցեց սկանջը, փակեց բերանը չրնական լուութեամբ եւ ծածկեց երեսը մեռելութեան պատանքով։

Այս անլուր անասնութեան, իր ճակտին նետուած անհամար անարգանքներու հանդուրժելով հանդերձ, գոնէ կրցա՞ւ կամ պիտի կրնա՞յ Եւրոպան ազատել իր օձիքը արդարութեան խախանձանքէն, անզուսպ բողոքի ահեղ ձայնէն։ Ոչ՛, չեմ հաւատար, քանի որ նա այդ կերպով ժառանգեց միայն ամենալկտի եւ վարար կնոջ մ'ամօթը, ու ինքգինք աւելի վատթար դրութեան մէջ գտնելու խլուրդային կուրութիւնը։

Ասոր հետեւանքը՞.—ահա անդին աղէտքը, արեւելքի հրաբուխը, Թուրքիա կոչուած իր խառնարանին մէջ սասակոծէն բորբոքած այսօր, կը հրդեհէ նորէն Հայաստանը. Մակեդոնիան եւ ամբողջ Փոքր—Ասիան, հրանուտ լաւաներ արձակելով նաեւ եւրոպական դաշտերու վրայ, որոնք գինովութենէ հաղիւ սթափած մարդու մը պէս կարծես ակամայ կը զգան իրենց երկի խժած սխալանքի գինին դառնութիւնը, որ մեզմէ աւելի՝ զիրենք թունաւորելու վրայ է։

Նայեցէ՛ք հեղ մը պալքանական պզտիկ պետութիւններուն. անոնք խումբ խումբ եղած միշտ կանդաճեն իրենց խոշոր յաւակնութիւնները յայտնելու։ Ռումանեան Յունաստանի հետ կ'եղբայրակցի խաղաղութեան անունով, բայց իսկապէս իրենց Մակեդոնացի արենակիցները Թուրքին լուծին տակ յաւերժացնելու համար

հակառակ ոլամներու։ Մեզ՛ք սա Աթէնացիներու աւանդական պատուոյն։

Պուլկարիան եւ Սերպիան ալ իրենց կոնակը հիւսիսային հզօրին կռթնցուցած՝ ձիերնին դէպի հարաւ կը քշեն։

Միւս կողմէն իրարու դաշնակից Աւստրիան եւ Իտալիան զիրար կը բզքտեն Ալպանիոյ համար։ Առաջինը կուզէ երկաթուղիի ցանցով պատել այդ գաւառը, իր երկրին կցելու մաքով։ Մինչդեռ երկրորդը, Դարատաղի միացած, ամէն միջոց չը խնայեր Աւստրիական բոլոր փորձերը խորտակելու եւ իր ազդեցութիւնը տարածելու եռանդով. բայց Ադրիական ծովը դեռ չա՛տ լայն է Հռոմուլոսի երկրէն Եպիրոսի բարձունքը ցատկելու համար։ Մանաւանդ որ ասոնց մէջ եղած անհամաձայնութիւնը Ռուսիոյ Թաքուն ու թունաւոր մատին արդիւնքն է, վասնզի ան կաշխատի միեւնոյն ժամանակ թէ Աւստրիոյ յառաջխաղացումն արգիլել եւ թէ Իտալիան իրեն քաշել։ Դուցէ խնդիրը կ'արգարուի, բայց միշտ Բեզերապուրկի դաշինքին փափաքածին համեմատ։

Հապա Թուրք-Ֆրանսական վէճը կերեւի թէ շուտով վերջ պիտի չի գտնէ, քանի որ վերջինը որոշած է ամէն հաշիւ մէկէն մաքրել։ Մեծ անկակներու շրջանին մէջ ենք։ Ամէն ազգ սպոթկալու վրայ է։ Ո՛ւ ըլլայ անձիջնէ Եւրոպային, բրդածը պէտք է դգալը գայ։

Այս ամենուն մէջ, մեզի համար ուրախալին է տեսնել Ֆրանսան, որ թէեւ քիչ մը ուշ, բայց աւելի դդոյշ ու յանկարծական արթնութեամբ մը իր անցեալ Թուլութեան վրայ մեղայի եկած, կսկսի ցոյց տալ կէզաական հին կրակոտութիւնն եւ կայառութիւնը համաշխարհային հարցերու եւ մասնաւորապէս մերինին մասին։ Արդէն հայտնեաց Հանոթօի բարեխրտ յաջորդը պարոն Տէլքասէն, իր վեհ ազգին այդ արժանաւոր զաւակը, պետական անձերու մէջ աւելի լաւ ըմբռնելովծանր պաշտօնին գիտակցութիւնը, յատուկ զարկ մը կուտայ հայկական դատին, Փորձեց Զարթն։ "հաւանութիւնն տանել. շատ բնականաբար պիտի հետապնդէ ալ, քանի որ այդ դիւանագէտը "միտքը դրածն ընելու" հաստատամտութիւնն ունի։

Անոր զօրավիգ պիտի ըլլայ անշուշտ նաեւ իր երկրին լրագրութիւնը, որ այս՝ օրերս ամենէն խոշոր հանճարներու, մտքի ամենէն ուժեղ թագաւորներու միջոցաւ կը փոթորկէ հրապարակը։ Միաժամանակ տեղական կուլտուրան, որ գրուած ներէ խորապէս կազդուի ու կը կերակի, շատ կատակ ընել երբէք չի գիտեր, գործ կարգադրել կը սիրէ՝ վայ Թուրքին գլխուն։

Աւելի գէշը կուզէ՞ք. — Սուլթանին միակ նեցուկ եղող բազուկն ալ ջլատուելու ենթակայ է։ Դեռ երէկ մեր դահճին դէմ համր կեցող, դեռ երէկ՝ մեր արիւնը կոխկռտելով Վիլհէլմին յաղթական այցելութիւնը սօնող տեւտոններ այսօր դրիչ կը շարժեն մեզ ի նպաստ։ Քարսիրտ գերմանները՝ այլեւս շատ լաւ հասկցած ըլլալու են թէ, իրենց՝ վեհափառին ցուցուցած օգնութիւնը՝ Սուլթանին, չի պիտի զօրէ բնաւ կասեցնել այն հոսանքը, որ կընթանայ յամրաքայլ՝ բայց միշտ իր թիրախին միշտ պէպի Հայաստան ու Մակեդոնիա, ազատելու համար զանոնք փրկութեան արեգակով։Հազար ամօթ Վիլհէլմ կոչուածին՝ որուն սրտին մէջ գութը մուտ գտած չէ, պերճ շահախնդրութիւնը տիրապետած է հոն։ Ան գիտէ միայն ժամանակին Թուրքին քթին խնդալ ու՝ գայն կողոպտել, իսկ նեղ օրին, թիկունքը կը դարձնէ անոր, հրամայելով որ «Եւրոպային ուզածը կատարէ»։ Միթէ արեւելեան՝ խնդրոյն մէջ ալ նոյնը պիտի չընէ՞, երբ իր դէմ տեսնէ գուցէ դարձեալ՝ Ֆրանսան, Ռուսիան, Անգղիան եւ Իտալիան։

Ինչ որ ալ ըլլայ, արեւմտեան ամբողջ մամուլը միահամուռ ցոյց մը կընէ ընդդէմ դիւանագիտութեան, որ կերեւի ճարահատ զինաթափ պիտի՝ ըլլայ այս՝ անգամ գրչի հարուածներուն տակ եւ պիտի շտապէ իր սխալը շտկելու համար՝ վերջակէտ մը դնել պահած անվայել սպասումին առջեւ։ Ցուցատու նշաններ շատ են։

Այո՛, կը կրկնեմ, մօտ ժամանակի մէջ, դիւանագիտութիւնը պիտի ըստիպուի՝ անպայման խոնարհիլ ու երկրպագել մտքի տաճարին՝ մամուլին առջեւ. այս մասին հաւատքս անխախտ է։

ՍԷԹ-ԳՈՌԱՑՐ

Ֆօքշան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուքրէշ 10 Հոկտեմբեր

Ամիսներ առաջ, տեղս ապրող հայ գաղթականների եւ նորաբաց ընթերցարանի վարիչ մարմնոյ շուրջը անցերող կարգ մը հակառական գրութիւններ երեւցան Նարժումի սիւնակներում։

Անշուշտ, այդ խնդրոյ գըլխաւոր շարժառիթներին անտեղեակ մին, անորոշ մի գաղափար կարող էր կազմել միայն. ուրիշ ոչինչ։

Իսկապէս. չա՛տ ցաւալի է մեզանում այս նսախտաւորութիւնից յառաջ եկած քննադատութիւնը բոլոր բարի ձեռնարկներում։

Ամէն սեղ ամեն տեղ, երբ ժամանակի պահանջումները ըմբռնող գիտակից երիտասարդների մի խումբ վեր է կենում ձեռնարկելու հասարակութեան մտաւորական զարգացման նպաստող մի գործի, միւս կողմից ընդհակառակը՝ անմիջապէս երեւան է գալիս ամբոխի գիտահաւանութիւնը չահագործող մի լեգէոն եւ խանգարում է գործը։

Նմանօրինակ պատկերն է ներկայացնում աստ եւ տեղւոյս ընթերցարանի վիճակը։ Ընթերցարանի վարիչ մարմնոյ դէմ սրնամէջ առարկութիւններ են մէջտեղ նետում. ու այդպիսով միշտ եւ միշտ հասարակութիւնն է բարոյապէս տուժելու հարկին մէջ գտնւում։

Նարաթներ առաջ գումարեց ընդհ. ժողով վարչական մի նոր մարմին ընտրելու նպատակաւ, սակայն տիրող անհամաձայնութիւնների պատճառաւ անհետեւանք մնաց։

Ամսոյս 7ին կրկին գումարեց արտակարգ ժողով, որի նպատակն էր քննել վարչական մարմնոյ տետրակները. այս անգամ էլ մեծամասնութիւն չի կազմելու պատճառաւ որոշեցին կազմել մի յանձնախումբ, որի նպատակն էր անգանձելի մնացած բաժնեգիններ հաւաքելով սպասել յաջորդ ընդհ. ժողովի գումարկութեան։

Արդ հակառակորդ պարոնները միթէ չե՞ն մտաբերում թէ տարիներ առաջ ի՛նչ կորստաբեր գրութեան էր մատնուած Ռումանահայութիւնը։

Ու այսօր կարգ մը կեանքի գիտակից ձեռքեր, երբ հայ հասարակութիւնը տիրող տարրի պատառ բարքերին չենթարկելու միաժամանակ օտարանալու հոսանքին առջեւ պատւար է հանդիսանում ազգապահպան ձեռնարկներով, անդին էլ չեն դադարում հրապարակը իրենց անվերջ ազորմելի տութիւններով լցնել։

Այսպէս է այնպէս թէ շատ ուրախ եմք որ վերապարթնումի նշաններ խօստացող երեւոյթներ են յայտնում մեր կեանքում։

Եւ ապնիւ անհատների կողմից որոշ աննկուն ջանքեր են գործ դրւում ժողովրդի անկորուստ մասին մըել մեր ազատագրութեան նուիրական յեղափոխական գործին օգնելու որը միակ պայմանն է փրկելու մեզ այս անտանելի դրութիւնից։

ԽՄՕ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

(Շար. Նախ. թիւն եւ վերջ)

«Մարգարէութիւնը կատարվեց։ Մենք փակել ենք, եկել, կանգնել նրա հողի վրա։ Բայց մենք չենք լալիս։ Այստեղ արտասուքի, լացի տեղ չէ. այստեղ ցո՛ւցված է անմահութեան քաղցր եւ թարմ ժպիտը։ Կանգնեն տարիներ, դարեր, կը ժամանակի արդար կխարձանը, կը մաշվի հաստաքարը պատուանդանը, ի՛նչ փոյթ, այդ քաղցր եւ թարմ ժպիտը կը մնայ կանգուն կապույտ երկինքի նման։ Ուրեմն ցածր, խոնարհեցէք ձեր գլուխները մեծ անուան, հանճարի եւ յիշատակի առաջ։ Ռափայէլ Պատկանեանը մեռաւ, բայց Գամառ-Քաթիպան կարող չէր մեռնել, նա մնաց։

«Արժանապատիւ հայր, հայ ազգի բերնից, հայ ազգի անունից ես դիմում եմ ձեզ եւ այս արձանը յանձնելով, սիրում եմ հաւատալ, որ այսուհետեւ թէ ձեր, թէ ձեր յաջորդների ամենավսեմ եւ ամենասիրելի պարտքերից մինը կը լինի հոգալ այս արձանի մասին»...

Մոսկվայի պատգամաւոր բանաստեղծ Ալ. Ծատուրեան կարդաց Մոսկվայի ուսանողների գեղեցիկ եւ զգացված ուղերձը։ Միւս պատգամաւոր երդուեալ հաւատարմատար Ստ. Մամիկոնեան պարզելով ժողովուրդին բանաստեղծի նշանակութիւնը, մատնանիշ արեց, որ պէտք է հետեւել նրա օրինակին։ Արհեստաւորաց դպրոցի ուղերձից յետոյ Ալ. Ծատուրեանը կարդաց հետեւեալ ոտանաւորը՝

Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնի՛դ է
կարօտ
Մեր հոգին էրված, մեր սիրտը
խարօտ...
Սեւ սուգ է պատել մեր կեանք ու
օրին,
Սեւ թախիծ է կապել մեր սար ու
ձորին.
Վա՛յ, սեւ գիշերն է մեր կեանքը
մաշում,
Քո լոյս-երգերի կարօտն ենք քաշում
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնի՛դ ենք
չկարօտ,
Ձ՞ես երգում էլ մեզ գարնան
առաւօտ...
Մեր օրն ու արեւ մթնել, սեւացել,
Դժոխքի դուռն է մեզ կեանքը
բացել,
Բաղդն էլ մեզանից երես շուռ տուել,
Խեղճ հային կրակի բերանն է գցել,
Էրվել ենք անմեղ, սրտներս խարոտ
Քո դեղ ու դարման երգին ենք
կարօտ։
Սարեսար ընկած՝ մենք վա՛յ ենք
կանչում,
Բաղդաւոր ազգեր մեզ չեն ճանաչում
Փաղցած ենք, ծարա՛ւ, անօ՛թի
խղճալի՛—
Հաց, ջուր ենք ուզում մեզ թոյն
են տալի.
Մեր ճամբէն դժուար, մեր ճամբէն
քարոտ.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, ձայնի՛դ ենք
կարօտ...
Լեզուով չի պատմվի հայի դարդ ու
ցաւ,
Հայի արիւնով աշխարհ ներկվեցաւ.
Սիրտն է մրմռում, սիրտն է սեւանում,
Աչքով մեր ձէնին ականջ չի անում.
Ո՞ւր ես, հայ բլբուլ, երգի՛դ է
կարօտ,
Էս սեւ օրերին մեր սիրտը խարօտ...
Բլբո՛ւլ, դու մեզ հետ տանջվում
ու լալիս,
Մեր անյոյս օրին՝ յոյս էիր տալիս.
Դու ասում էիր—ա՛գդ եմ, մի՛ ալա
«Յուսով եմ, վաղ ուշ գարունը պիտ
գայ»։
Բայց, ա՛խ, չը տեսանք գարուն
փարդահոտ
Ո՞ւր ես հայ բլբուլ, ձայնի՛դ ենք
կարօտ...

Հոգեհանգիստը վերջացաւ։ Միքայէլ Նալբանդեանի վրա դրված էր մի չքեղ պսակ նոյնպէս Մոսկվայի հասարակութիւնից եւ սկսվեց հոգեհանգիստը Նալբանդեանի գերեզմանի վրա։ Հասարակութիւնը մեծ էր։ Ռոստովանսկեր քաղաքագլուխը, քաղաքային վարչութեան անդամները, հիւրերը

ՎՐԻՊԱԿ

—օ—

Նախորդ ՇԱՐԺՈՒՄԻ մէջ (թիւ 358) հրատարակուած ոտանաւորին մէջ սպրդած են հետեւեալ տպագրական սխալները։

ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
Ա. տող Լուռմունջ	Լուռ ու մունջ
Դ. » Երգին	Երգին
Ե. » Ոսկէհուռ	Ոսկեհուռ
Զ. » Զար	Ցար
Է. » Ժայռին	Ժայռին
Ը. » Կառուղ մըն է	Կառուղ մ՚ է
Ժ. » Կախուած	Կախուած
ԺԳ. » Իմ հայրենիքի	Հայրենիքին իմ
ԺԵ. » Պայզայ	Պայզայ
ԺԶ. » Տաքարիւնը	Տաք արիւնը

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Անցեալ օր դաշնակցութեան Արեւմտեան բիւրօն ԴՐՕՇԱԿի մէջ յայտարարած էր թէ՝ անհամբերութեամբ կը սպասէ պատասխանի եւ շատ փափաքելի է, որ այդ պատասխանը նպաստաւոր ըլլայ ամէն անկեղծ հայ յեղափոխական տարրերու միանալուն։

Մենք ալ կը փափաքինք որ միութիւնը տեղի ունենայ ամէն մաքուր յեղափոխականներուն միջեւ։

Եթէ միութիւնը տեղի ունենայ միայն վերակազմեալներու եւ Դաշնակցութեան միջեւ, այն ատեն դուրս պիտի մնան հին Հնչակեանները Արմէնականները եւ նոյն իսկ Միութենականները։ Նորէն ազմուկ պիտի բարձրանայ միութեան անունով, նորէն սըրտեր պիտի պղտորուին, նորէն բանակռիւներ պիտի տեղի ունենան, որով եւ յեղափոխականներ սախպուած պիտի ժամավաճառ ըլլան։

Ուստի նոր փորձանքներէ ազատ մնալու, հին վէճերը եւ պառակտումները վերստին չը կրկնուելու համար, թէ Դաշնակցութիւնը եւ թէ վերակազմեալ Հնչակեանները ամէն ճիգ պիտի թափեն միութեան խնդիրը, հնար եղածին չափով, վերջնականապէս լուծեն որ մեր գեղջկներուն զբաղման նիւթ չը մնայ։

Զուտ յեղափոխականներու համար միութեան էն կարեւոր հիմքը՝ գինադադար չըլլալ եւ կռիւ չարունակել, արդէն գոյութիւն ունի, տարբերութիւնը կռիւը մղելու ձեւին մէջ է։ Եւ ատ ալ հիմա յեղափոխականներուն համար, որչափ ալ անունք տարբեր կազմակերպութիւններ՛ ունենան այնքան անորոշ բան մը չէ։ Բաւ է միայն խնդրոյն գիտակցօրէն եւ աչալրջաբար մօտենալ, ու անատեն կը տեսնուի որ մինչեւ օրս գոյութիւն ունեցող տարբերութիւնները այնչափ ալ անյաղթելի եւ անընկճելի պատուարներ չեն։

Այս ճգնաժամային օրերուն մէջ յուսով ենք որ մեր յեղափոխական գործիչները ջանք չեն խնայեր այդ օգտակար բայց եւ այնպէս նուրբ խնդրին մէջէն պատուաւոր կերպով դուրս ելլալու, հայրենիքին եւ ժողովրդին շահերը աչքի առաջ ունենալով։

ԿԷՏ

ԱՐԹԻՆ ՓԱՇԱՅԻ ՄԱՀԸ

Անցեալ օր Պոլսոյ մէջ, բաւական երկարատեւ հիւանդութենէ մը վերջը կնքեց իր մահկանացուն Արթին փաշա Տատեան։

Արթին փաշան հայ լինելով հանդերձ Թուրքիայի մեծ օգուտներ տուաւ թէ արտաքին եւ թէ ներքին քաղաքականութեան մէջ։

Արթին արտաքին գործոց նախարարութեան մէջ առաջին խորհրդականի պաշտօնը ունէր թէեւ, բայց նախարարէն ալ մեծ ազդեցութիւն ունէր եւ գրեթէ Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան ղեկավարը կը համարուէր։

Արթին, իբր դիւանագէտ, երկդիմի յարաբերութեանց մէջ կը գտնուէր իր ազգին եւ այն հալածող կոտորող Սուլթան Համիտին հետ։

Արթին, ճիշդ է ժամանակներ եղան որ կրցաւ Սուլթանին եւ Թուրք կառավարութեան առջեւ հայը պաշտպանել կրկին իրեն նպատակ ունենալով Թուրքիոյ շահերը, բայց վերջերս բոլորովին թուլցաւ։

Հայկական յեղափոխութեան մէջ ալ Արթին ուզեց դեր կատարել. ան Սուլթանէն արտօնութիւն ստացաւ հայ յեղափոխական Դաշնակցութեան հետ բանակցութիւններու սկսիլ, հայկական խնդիրը, առանց եւրոպական միջամտութեան կարգադրելու։

Սակայն Արթինի դիւանագիտութիւնը անկարող եղաւ Դաշնակցութիւնը համոզել։ Ու շատ բնական էր. յեղափոխական մարմնոյ մը դիւանագիտութիւնը կտրուկ եւ ուղիղ ճամբայով կընթանայ, երկդիմութիւններ. ոլորաններ չունի։ Իսկ Արթին իբր դիւանագէտ, այն ալ արեւելեան դիւանագէտ, ուղիղէն, շիտակէն ու կտրուկէն շարունակ կը խուսափէր իր յարաբերութիւններուն եւ թղթակցութիւններուն մէջ։

Հայկական շարժումներու մէջ Արթին կուզէր այն դերը խաղալ, ինչ որ Լորիս Մէլիքօվ խաղաց Ռուսիոյ մէջ Ալէքսանտր Բ.ի ժամանակ. թէեւ կարճ միջոցի մը համար։

Ու Լորիս Մէլիքօվ իր յեղափոխութեան վիժող քաղաքականութեան մէջ աւելի բաղդաւոր գտնուեցաւ, քան Արթին փաշա, որովհետեւ ան իր դիմաց ունէր Ալէքսանդր Բ. մը, իսկ Արթին Սուլթանի պէս ճիւաղ մը։

Այսպէս թէ այնպէս, այժմ Արթինի մասին որոշ գաղափար մը կազմել անհնարին է։

Ներկայ հասարակութեան անկարելի է մանրամասնօրէն քննել Արթինի ըրածները յօգուտ հայերու եւ թուրքերու եւ ստուգել թէ անոր ներքին աշխարհին մէջ որը աւելի կը գերակշռէր, հայասիրութիւնը, թէ թուրք կայսրութեան օգտին ծառայելու զգացմունքը։

Այդ մահը վերջ տուաւ Արթինի երկդիմի հոգեկան տանջանքներով լի կեանքին, որովհետեւ ան կուզէր թէ աղէկ հայ երեւնալ եւ թէ աղէկ թրքական պաշտօնեայ։

Այդ երկու արմատական ու խոշոր հակասութիւններու մէջ ապրող մարդ մը՝ չէր կրնար հանգիստ կեանք մը ունենալ, մանաւանդ վերջին տարիները։

***

բոլորը ժողովվեցին վանքի պատշգամբը ճաշելու. Մօտաւորապէս 120 հոգի էին։

Ճաշին Թեմական դպրանոցի տեսուչը կարդաց Գր. Զալխուշեանի ստացած հետեւեալ հեռագիրները.—Նոր-Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսից, Աստրախանի առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոսից, Ղարաբաղի թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Գասնակերեանից, «Մշակ»ի խմբագրութիւնից, «Մուրճ»ի խմբագրութիւնից Գաբ Սունդուկեանից, Սմբատ Շահազիզեանից, Գէորգ Բարխուդարեանից, Պ. Պռօշեանից, Երեւանի թեմական դպրանոցի ուսուցչական խմբից, բըժիշկ Նաւասարդեանից, Ներսէսեան դպրանոցի հոգաբարձութիւնից, երգահան Հասատրեանից Տէրեանից, ուսուցչապետ Խալաթեանից, բանաստեղծի զաւակներից, Եղիայի հասարակութիւնից, Ղարսի հոգաբարձութիւնից եւ այլն։

Ճաշի ժամանակ խօսեցին Մուշէ վարդապետը, Գր. Զալխուշեանը, Ստ. Մամիկոնեանը, Եր. Շահազիզը եւ Վ. Բիրլեանը։ Թէ ճառերը, թէ հեռագիրները ժողովուրդը ընդունում էր բուռն ծափահարութեամբ։ Երկու պատգամաւորներից Ջոն՝ Մոսկվայից եկել էին երեք երիտասարդ վաճառականներ։ Այս վերջիններից մինը, Պ. Պօղոսեան, իմանալով որ Գր. Զալխուշեանի սրտամաղութեան տակ գտնուող գումարը փոքր է, գիջելով ժողովրդի ցանկութեանը, յօժարութիւն յայտնեց նուիրել Էջմիածնի թանգարանին Գամառ-Քաթիպայի արձանը կերտելու համար մնացած ողջ գումարը, որը կարժենայ մօտաւոր բայց 400 րուբլի։ Առհասարակ պէտք է ասած, որ Մոսկվայի ներկայացուցիչները մեծ կենդանութեան տուեցին հանդէսին։ Զարմանալի է որ միւս քաղաքներից ոչ ոք չը կար։ Ստացանք միայն հեռագիրներ, այն էլ ոչ ամենից։ Օրինակի համար ժողովրդին սրտին մեծ ցաւ էր, որ Գամառ-Քաթիպայի արձանի բացման օրը չը ստացանք կոնդակ։ Մեր բոլորիս ցանկութիւնն էր կոնդակով բանալ արձանը։ Մինչեւ վերջին րոպէն մենք սպասում էինք եւ հաւատում էինք, որ կըստանանք, մեր յոյսերը խաբուսիկ լինեւ կոնդակը չեկաւ։ Եւ սակայն Գամառ-Քաթիպան ողջ կեանքում Էջմիածնի ամենաջերմ պաշտպանն էր։ Յարգելով մեծ բանաստեղծի գաղափարները, Պ. Զալխուշեանը թոյլտուութիւն խնդրեց Մոսկվայի պատգամաւորներից արծաթեայ պսակը ուղարկել Էջմիածնի թանգարանը։ Այս պսակը կը յանձնուի Պ. Տէր Մարուքեանին, որը անձամբ կը հասցնէ նրան տեղը։ Հանդէսի գեղարուեստական մասին հրսկում էր պ. Ղուկաս Ալաճալեանը, որը գեղեցիկ զարդարեց վանքի բակը։ Ճաշի ժամանակ կարգադրիչներ էին Եր. Շահազիզ եւ Վ. Բիրլեան եւ թէեւ բազմութիւնը մեծ էր, ամէն բան կարգին էր։

Ճաշից յետոյ դեռ երկար ժողովուրդը չէր հեռանում եւ, սեղանի շուրջը նստած խօսում էր մեր առօրեայ չար ու բարիի մասին, ցաւելով որ ինչպէս պ. Շահազիզն իր ճառի մէջ գեղեցիկ շեշտեց մենք շատ ենք մոռանում ամէն բան եւ շուտ ենք մոռանում եւ մեր բանաստեղծներին եւ նրանց գաղափարները։ Պ. Զալխուշեան ժողովրդի ցանկութեան համաձայն, գեղեցիկ կերպով կարդաց Գամառ-Քաթիպայի երկու ոտանաւորները, իսկ պ. Մատուրեանը կրկնեց իր ոտանաւորը։ Ներկայ եղողները բուռն ծափահարում էին։

Հանդէսից յետոյ վերադառնալով Ս. Խաչից քաղաք մենք գտանք սեղանի վրայ հետեւեալ հեռագիրները.— Արքեպիսկ. Սուքիասից, Ներսէսեան դպրոցի տեսչից եւ ուսուցիչներից։ Բանաստեղծի զաւակներից, Մոսկվայի ուսանողներից, Բալախանիի Русское нефте промышловное ընկերութեան ծառայողներից, Աղստաֆայ՛ց վարդապետ Գարեգին Ցովսէփեանից, Երեւանի երկրպագուների մի խմբից, պ. Թիմուրեանից, Էջմիածնի հոգեւոր ակադեմիայից, Պետերբուրգի ուսանողութիւնից եւ հասարակութիւնից եւ Նամակ Գէորգ Դոդոխեանից։

Հեռագիրների բովանդակութիւնը միւս անգամ։

ԳՐ. ԶԱԼԽՈՒՇԵԱՆ

(ԱՐՏԱՏՊՈՒԱԾ ՄՇԱԿԻՑ)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բրօ Արմէնիայի Պոլսոյ թղթակիցը մանրամասն տեղեկութիւն կուտայ Մուշի մէջ պատահած անցքերու մասին։ Միւս անգամ մանրամասնօրէն կը հաղորդենք մեր ընթերցողներուն։

— Ընկերվարականներու միջազգային բիւրօն, որ Պրիւքսէլ կը գտնուի, որոշած է կոչ մը հրատարակել և բոլոր ազգերու երեսփոխանները հրաւիրել որ միջամտեն Հայաստանի կոտորածներու առջեւը առնելու համար։

— Մուշի նորընտիր առաջնորդ Խորոյվ վրդ. իր պաշտօնատեղին հասեր է։ Կըսեն թէ Խորոյվ վրդ. իր վիճակին օգտակար ըլլալու առաջադրութեամբ կը ձեռնարկէ իր պաշտօնին։

Տեսնանք, Մուշի վիճակը հիմա՞ւս տեղի խառնէ. խելքը գլուխը և ազնիւ մարդը օգտակար ըլլալու բուն իսկ վայրին մէջ կը գտնուի։

Թան կը հաղորդէ որ Մուշի մէջ Ռուս հիւպատոսին ռուս սգաւանութիւն ընդունելու համարդի մոդ հայերուն թիւը 6000 է։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Եըլաբզի մէջ տեսակ մը տարտամութեամբ կը վերաբերի դէպի Ֆրանս-Թրքական ընդհարումը։

Սուլթանը հակառակ է նոր փոխառութիւն մը ընել Ֆրանսացի պահանջատերերուն վճարելու համար։

Սուլթանը կը յուսայ որ Ֆրանսական երեսփոխանական ժողովը բացուելուն պէս ատ խնդիրը ժողովարանին մէջ պիտի քննադատուի և իր՝ սուր կերպարանքը պիտի կորսնցնէ։ Ատոր համար ալ կը քաշքշէ։

— Պոլսոյ թուրք շրջանակներու մէջ լուր տարածուած է որ աւագակներէ գերուած Միսս Ցթօն ջերմ համակրող մը ն է Մակեդոնական դատին և դիտմամբ գերի ընկեր է յեղափոխականներու ձեռքը, որպէս զի իր պատճառով յեղափոխական մարմինը խոշորկէք գումար մը ստանայ։

Իրաւ թուրքերը շատ սրամիտ հնարողներ են եղեր։

— Բարիզէ կը հաղորդեն թէ՝ Ռուսիոյ և Ֆրանսայի դիմումով պետութիւնները պիտի խորհրդակցին այն միջոցներուն վրայ որոնք պիտի ձեռք առնուին Թուրքիան ոտիպելու Պերլինի դաշնագրութեան մէջ նշանակուած բարենորոգումները մտցնելու Մակեդոնիոյ եւ Հայաստանի մէջ։

— Նոյն տեղէն կը հաղորդեն թէ՝ Ֆրանսս Թուրքիոյ դէմ խիստ միջոցներ ձեռք չէ առած, որովհետեւ կը վախնայ թէ ներքին աւելի մեծ խռովութիւններ կըրնան ծագել հոն։

ԹՐԱՆՍՎԱԷ

Պօթա Պօէր զօրավարը հրամայեր է աւերել և այրել անգլիացիներու տները, ի փոխարէն այրուած և աւերուած պօէրական տուներու։

Անգլիացիները շատ դժգոհ են նախարարութենէն, որ Քիչնէրի թոյլատրած է Պօէր սպաները և զինուորները սպաննել։

Հիմա կը յայտնուի որ Պօէրները անգթօրէն վրէժխնդիր են, և ատոր համար ալ անգլիացիք կը պահանջեն սահմանափակել գլխաւոր հրամանատարին իրաւունքները, նոյնիսկ ետ կանչեն և անոր տեղը ուրիշ մը ղրկեն։

Անգլիոյ մէջ կը կրածեն որ այդ կէտին մէջ ժողովուրդին գոհացում պիտի տրուի. մանաւանդ որ վերջերս պօէրները բաւական յաջող քայլեր կընեն։

— Լուր տարածուեր է թէ պօէր նշանաւոր զօրավար Տուէթ մեռեր է։

Սակայն միւս կողմէն ալ կըսեն որ դեռ վերջերս Տուէթի հետ անձամբ խօսողներ եղեր են։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Պալկ. հեռ. գործակալութիւնը կը հաղորդէ որ Պօրիս Սարաֆովը, Մ. Կօմիթէի նախկին նախագահը իր ստորագրութեամբ նամակ մը տպագրեր է „Թան"ի մէջ, հերքելով իրեն վրա բարդուած սուտը Միսս Ցթօնի առևանգման մասին, և յայտարարեր է որ ինք երկու ամիս է վերջ պիտի Պուլկարիա վերադառնայ և ներկայանայ կառավարութեան։

— „Բօշդա" թերթը կը հաղորդէ որ մեղադրուող նախարարներու համար կազմուած հարցաքննիչ յանձնախումբը որոշած է Պ. Թօնչէվէ և Իվանչովէ 50000 ֆրանքի երաշխաւորութիւն պահանջել, եթէ ոչ պէտք է որ ձերբակալուին։

ՍԱՄԵՐԻԿԱ

Մ. Ն. կառավարութիւնը անիշխանականներուն դէմ օրինագիծ մը մշակեր է որ պիտի ներկայացնէ ազգային ժողովի յառաջիկայ գումարումին։

Այսուհետև ոչ մէկ օտար անիշխանականի թոյլ պիտի տրուի Միացեալ Նահանգները ոտք դընել։

ՊԵԼՃԻԳԱ

Պրիւքսէլի ընկերվարականներու ժողովրդային տանը մէջ ժողով մը կատարուեր է, ուր ընկերվարականներու պետը և երեսփոխան Վանտէրվէլտ ժողովուրդը հրաւիրեր է հրաժարիլ գործածել ոստիկաններու և դօրքերու դէմ, եթէ ատ վերջիններու հետ ընդհարում տեղի ունենայ։

Այդ առաջարկութիւնը բուռն ծափահարութիւններով ընդունուեր է։

ԿՐԵՏԷ

Պոլսէն „Ֆրանկֆիւրթեր Ցայթունկի կը հաղորդեն հետեւեալը՝

Ռուսիա հակառակ մինչեւ օրս բռնած դիրքին, Կէորկիոս իշխանէն աղաւութիւն տուած է Կրէտէի գործերու մասին։ Կէորկիոս իշխանը Եւրոպայէն վերադառնալուն պէս, ազգային ժողով պիտի բանայ, որ իշխանին համաձայնութեամբ Կրէտէի Ցունասանի հետ միացումը պիտի յայտարարէ։

Կը կարծուի որ Ֆրանսա, Իտալիա և Անգլիա պիտի համաձայնին։

ՃԱՊՈՆ

Ճապոնի մէջ Ռուսիոյ նոր բանակցութիւնները Մանչուրիոյ մասին մեծ իրարանցում առաջ բերեր են։ Տեղական նշանաւոր թերթերը կը գրեն թէ Ճապոնը պարտաւոր է կորովի կերպով դիմադրել այդ տեսակ պայմանագրութեան մը։

—o—

ԳԵՐՄԱՆԻԱ

Հաւտսի գործակալութիւնը հետեւեալ բացատրութիւնները կուտայ Պաղդատի երկաթուղիին գծի շինութեան ուշանալուն համար։

Թուրքիա կը տատանուի վերջնականապէս որոշելու այդ գծին շինութիւնը յանձնել Գերմանական ընկերութեան, որովհետեւ առաջարկուած պայմանները շատ ծանր են, թէև Գերման դեսպանը Թուրքիան կշտամբեցնէ։

Այդ գծին երկարութիւնը պիտի ըլլայ 2000 քիլօմ. որ պիտի բաժնուի 10 մասերի, ամէն մէկը 200 քիլօմ։ Ամէն մէկ բաժինը իրաւունք պիտի ունենայ թրքական գանձարանէն ամէն մէկ քիլօմ. համար տարեկան 13000 ֆրանք ընդունիլ և գծին երկու կողմերէն քառանկան քիլօմ. հողով պիտի օգտուի։ Այնպէս որ ամբողջ գծի համար Թուրքիա տարեկան պիտի վճարէ 26 միլիոն ֆրանք։ Իսկ ընկերութեան յատկացուած հողին տարածութիւնը պիտի ըլլայ 40 հազար քիլօմ. որուն վրայ Թուրքիա այլևս իրաւունք չի պիտի ունենայ։

Այդ գիծը եթէ մաս մաս շինուի, ամբողջ գծին շինութիւնը քառասուն տարի պիտի տեւէ։

Ուրեմն պարզ է թէ այսչափ ծանր պայմանները այնչափ դիւրութեամբ չեն ընդունուիր։

ԱԶԴ

Անցեալ անգամ, գրաչարի հիւանդութեան պատճառով երկրորդ փորձ չեղաւ և ատոր համար ալ Շարժումի մէջ չատ սխալներ սպրդած են։

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Իւնիոն տէ Զէդիւտիան Ամր.
լէօրոբ ռիւ տը լէֆօյ տը Շիվի 2

Սուիս Ժընէվ
կարգադիր Ցանձնաժողով

ԱԶԴ

—o—

Սիլիսդրէի ազգային արական վարժարանի համար կուզուի մը-կայեալ ուսուցիչ մը որ կարող ըլլայ աւանդելու՝ հայերէնէ ու ֆրանսերենէ զատ՝ նաեւ երկրորդական գիտելիքներ։ Փափաքողք բանակցութեան համար թող բարեհաճին դիմել տեղւոյն ազգային վարժարանին հսգաբարձութեան։

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

—o—

Ց. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ
Նոր Ընթերցարան (պատկերազարդ)
Առաջին տարի
(Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած)
Դին 70 Սնթ.
Կը ծախուի Վառնայ Մ. Դալբակճեանի քով։

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность" — Варна